ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵԿԱՄՏԻ ՍՏԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 1263-Ն
Տիպ	Հրաման
Ակտի տիպ	Հիմնական ակտ (02.12.2023-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2023.11.27-2023.12.10 Պաշտոնական հրապարակման օրը 01.12.2023
Ընդունող մարմին	Պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Ընդունման ամսաթիվ	01.12.2023
Ստորագրող մարմին	Ժամանակավոր պաշտոնակատար
Ստորագրման ամսաթիվ	01.12.2023
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	02.12.2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«1» դեկտեմբերի 2023 թ. N 1263-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵԿԱՄՏԻ ՍՏԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 407-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել՝ անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի և դրա դադարեցման վերաբերյալ հայտարարության ձևը և ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Արտյոմ Սմբատյան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2023 թ. դեկտեմբերի 1-ի
N 1263-Ն հրամանի

Ձև

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵԿԱՄՏԻ ՍՏԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարձատուի վերաբերյալ տեղեկություններ[1]	
1. Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը	
2. Ֆիզիկական անձի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
3. Ֆիզիկական անձի բնակության վայրը	
4. Ֆիզիկական անձի հեռախոսահամարը	
5. Ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը	
6. Ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը (ՀԾՀ) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը)	
7. Հայտարարության ներկայացման ամսաթիվը	

8. Հայտնում եմ, որ
1) 20__ թ. _____ ____-ից մինչև 20__ թ. _____ ____-ը _____ հասցեում գտնվող անշարժ գույքի վարձակալությունից ստացվող _____ եկամուտը կազմելու է _____ դրամ.
(օրական, շաբաթական, ամսական)

2) 20__ թ. _____ ____-ից _____ հասցեում գտնվող անշարժ գույքի վարձակալությունից ստացվող _____ եկամուտը կազմելու է _____ դրամ.
(օրական, շաբաթական, ամսական)

3) 20__թ. _____ ____-ից դադարում է _____ հասցեում գտնվող անշարժ գույքի վարձակալությունից եկամտի ստացումը.

Վարձակալի վերաբերյալ տեղեկություններ	
9. Վարձակալ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը	
10. Վարձակալ ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ նույնականացման քարտի համարը	
11. Վարձակալ ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը (ՀԾՀ) կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը)	
12. Վարձակալ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	
13. Վարձակալ կազմակերպության լրիվ անվանումը	
14. Վարձակալի ՀՎՀՀ	

Ֆիզիկական անձ _____
(ստորագրությունը)

[1] - Հայտարարության ձևի 1-ին, 2-րդ, 5-7-րդ կետերը և 8-րդ կետի որևէ ենթակետ ենթակա են պարտադիր լրացման:

ԿԱՐԳ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵԿԱՄՏԻ ՍՏԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԴՐԱ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի և դրա դադարեցման վերաբերյալ հայտարարության ներկայացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգին համապատասխան հայտարարությունը ներկայացնում է անշարժ գույքը վարձակալությամբ տրամադրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը:
3. Հայտարարությունը հարկային մարմին է ներկայացվում էլեկտրոնային եղանակով: Մինչև հայտարարության էլեկտրոնային եղանակով ընդունման ծրագրային ապահովման առկայությունը, հայտարարությունը ներկայացվում է թղթային եղանակով:
4. Անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի վերաբերյալ հայտարարությունը հարկային մարմին ներկայացվում է այդ իրավունքի փաստացի ծագման օրվան հաջորդող 5-օրյա ժամկետում, իսկ եկամտի ստացման դադարեցման դեպքում՝ դադարեցման օրվան հաջորդող 5-օրյա ժամկետում:

Պաշտոնական հրապարակման օրը՝ 1 դեկտեմբերի 2023 թվական:

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան